

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Ուրախութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ Իշխանը Թիֆլիսում. Մեր թղթակիցներն.—Ներքին Տեսչութիւն. Միմյանների կօմիտէի բարձրագոյն հաստատած որոշումը. Անտոյի կորուստներ. Օպերային ներկայացումները. Նամակ Սոֆիայի. Նամակ Կարսի գաւառից. Նամակ Մեծ-Ղարաբաղից. Նամակ իմպերատրիսան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՉԱԿԻՆ. Աւստրիա. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ. Միջազգային կոնգրէսները Պարսկում:

ՄԵՏ ԻՇԽԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ներկայումս հիւր է մեզանում Մեծ Իշխան Կոստանային Կոստանային: Նա գիտութիւնների Ազգեմիայի նախագահն է սկսած 1889 թվականից: Նա վայելում է համակրելի և տաղանդաւոր բանաստեղծի համբաւ: Նրա ոտանավորները թէ ամ սակիւններում տպւած ժամանակ և թէ առանձին հրատարակութիւնների մէջ ստորագրւած են Կ. Բ. զլխատառերով: Նրա ոտանավորների երեք հատորները շատ լաւ ծանօթ են ռուս գեղեցիկ գրականութեան հետեւողներին: Այդ ոտանավորների մէջ երգված են ազնուութիւնը, սէրը, աշխատող ժողովուրդը, հասարակ զինուորը, բռնութիւնը և նրա սքանչելիները:

Մեծ Իշխանը նշանակված է Բարձրագոյն հրամանով իբրեւ զլխաւոր վերահսկիչ զինուորական դպրոցների վրա: Առաջին քայլերից իր նոր պաշտօնում Մեծ Իշխանը ցոյց տուցի իրան մանկավարժական առողջ և խելացի սկզբունքների պաշտպան: Նա եկել է Անգրիկոկաս այցելելու զինուորական կրթութեան գործը մեր երկրում:

Մեծ Իշխանը այցելեց կադետների և իւնիւստների դպրոցները և մանրամասն ծանօթացաւ կրթական վիճակի հետ:

Մեծ Իշխանի գալուստն առիթով կոմկասեան կառավարչապետ իշխան Գոլիցինի պալատում տեղի ունեցաւ երկուշաբթի, սեպտեմբերի 25-ին, պաշտօնական ճաշկերպ:

ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՕՆԳՐԵՍՆԵՐԸ ՊԱՐԻՋՈՒՄ

Կանանց միջազգային կօնգրէս

Ահա կանանց կոնգրէսի կայացրած որոշումները: Հաւասար աշխատութեան համար հաւասար վարձատրի սկզբունքը լինելով զուտ արդարութեան սկզբունք, պէտք է կանայք և տղամարդիկ հաւասար աշխատանքի համար հաւասար վարձ ստանան: Կանանց աշխատութեան վերաբերեալ բոլոր բացառիկ օրէնքները պէտք է ջնջվեն և նրանց տեղ գործադրվի բոլոր գործաւորների վերաբերմամբ, առանց սեռի խտրութեան, մի հոմանիւնը կանոնադրութիւն. թէ ֆրանսիական և թէ օտար պետութիւնների մէջ գործադրվող օրէնքները աշխատութեան տեսչութեան մասին պէտք է ընդարձակվեն և գործադրվեն նաեւ առեւտրական աների վերաբերմամբ, կանոնադրելով երկու սեռի գործաւորների աշխատութիւնը. աշխատութեան տեսչութիւնը պետութեան վարչութիւնների կամ գործարանների մէջ, առեւտրական եւ արգիւնարական հաստատութիւնների մէջ պէտք է լինի ամենաշատ ութ ժամ եւ չարժեք մէջ մի օր պէտք է արվի հանգստութեան համար և այդ առանց վարձագինը կտրելու: Ծառաների աշխատութիւնը պէտք է հաւասարեցնվի պաշտօնական եւ գործաւորների աշխատութեան, հանգստութեան եւ առողջապահութեան տեսակէտից, Բոլոր գործատէրերը պարտաւոր

ւորվում են երեկ, երեքշաբթի, սեպտեմբերի 26-ին, մեր քաղաքի Օգոստափառ հիւրը այցելեց Թիֆլիսի արքունական թատրոնը:

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

Մեր միշտ մի առանձին ուղարկութիւն ենք դարձրել այն բանի վրա, որ ունենանք բազմաթիւ թղթակցութիւններ մեր երկրի զանազան մասերից: Կարողութիւնը ներածին չափ մենք աշխատել ենք ստանալ թղթակցութիւններ նաեւ մեր երկրից դուրս գտնվող նշանաւոր կենտրոններից և արձանագրել ա՛յլ ընկնող խոշոր երեւոյթներ և ընդհանուր հասարակական հարցեր:

Թղթակցութիւնների համեմատական աւստութիւնը կարողութիւն է տուել մեզ հետեւելու մեր գաւառական կեանքի արտայայտութիւններին, ծանօթանալու նրա ցաւերի և ուրախութիւնների հետ և արձագանք լինելու տեղական պէտքերին և կարիքներին: Թղթակցութիւնների և մանրամասն հաղորդագրութիւնների նշանակութիւնը գնահատելով մենք անկասկած կը ցանկանայինք, որ նրանք աւելի ևս կանօնաւոր և սխտեմական ձև ստանալին, որպէս զի գաւառական կեանքի մըշտական ուսումնասիրութիւնը կատարվէր աւելի հանգամանօրէն և աւելի լուրջ կերպով:

Ձեռք կարող սրտի ցաւով չը լինել մի բանի դէպքեր, երբ թղթակցութիւնների հեղինակները սխալի մէջ են գցել խմբագրութիւնը և հաղորդել են շինծու կամ չափազանցած տեղեկութիւններ: Բարեբաղդաբար յայտնվիւնք թիւը եղել է համեմատաբար շատ քիչ և մենք աշխատել ենք միջոցներ ձեռք առնելու նրանց դէմ:

Յայտնելով մեր անկեղծ շնորհակալութիւնը բոլոր այն անձանց, որոնք բարեխիղճ և հարազատ կերպով վերաբերվել են թղթակցի պաշտօնին, մենք մի և նոյն ժամանակ պարզեց ենք համարում յայտնել հետեւեալը: Մի բանի անձինք զիմէ են խմբագրութեան և ստացել են թղթ-

թակցի վկայական, որ նրանց կարողութիւն է տալիս մուտք գործել զանազան ժողովների և հիմնարկութիւնների մէջ: Սակայն պէտք է լաւ լինել, որ մեր վկայականով մենք տուել ենք միայն թղթակցի հաւաստութիւն. իսկ գրանից դուրս չենք տուել ոչ մի լրագրութիւն և ոչ մի ներկայացուցչութիւն լրագրի կողմից: Այս կէտը շատ կարեւոր է, որովհետեւ թղթակցը պէտք է ամենախիստ կերպով զտուէ իր իրեւ թղթակցի պարտաւորութիւնները իր միւս անձնական խնդիրներից, իր անստեղծական հաշիւներից և մանաւանդ զգուշ լինի, երբ նա մասնակցում է այնպիսի գործերում, որոնք պատասխանատու բնուորութիւն են կրում և որտեղ պահանջվում է որոշ ներգործական մասնակցութիւն, իսկ որոնց վերաբերութեամբ խմբագրութիւնը ոչ մի լրագրութիւն չէ տուել: Կա կարեւոր է թիւրիմացութիւնների առաջն առնելու և իրերը իրանց իսկական էութեան մտքով ըմբռնելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՉԱԿԻՆ

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԿՕՄԻՏԵՍԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԱՄ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայերէն գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութեան փակման մասին.

Լսելով ներքին գործերի մինիստրի գրութիւնը 1900 թվի մայիսի 30-ից № 1270, հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը փակելու մասին, մինիստրների կոմիտեով կարծիք յայտնեց. այս առաջարկութիւնը հաստատել:

Թագաւոր Կայսրը, 1900 թվի յունիսի 16-ին, Բարձրագոյն բարեհաճութիւն տուեց այդ որոշման:

ԱՆՏԵՂԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Այս 1900 թվականին Բագուի նաւթահանքերում հրդեհները մի չը տեսնված ու չը լրացված ծաւալ են ստացել: Ուշոր հրդեհների մասին

մեծ աշխարհակալները, որոնք պղծել են Արգարութիւնը եւ Իրաւունքը: Աշխարհական կրթութեան վերաբերեալ օրէնքը չը պէտք է թող տայ ոչ մի դպրոցի մէջ դաւանաբանական ուսումնի, որոնց նպատակն է ստրկացնել խղճտանքը: Բոլոր քահանայութիւնները, հարուստ թէ աղքատ, պէտք է որ եւ է մի արհեստ սովորեալ կանանց համար մի լրացուցիչ ուսումն պէտք է հաստատվի, այն է—երկալի գիտութիւնը և ընտանիքի գիտութիւնը (առողջապահութիւն, երեխայի ֆիզիոլոգիա եւ հոգեբանութիւն, բարոյական եւ ֆիզիկական դաստիարակութիւն, սովորական բժշկութեան գիտելիք, տնայարարութիւն): Բոլոր օրիորդական դպրոցներին կից պէտք է հաստատվեն մուսուներ, ուր աղջիկները, բժիշկների հակողութեամբ, պէտք է պատրաստվեն ընտանիքի ապագայ մայրեր լինելու: Աղջկանց բոլոր զբաղումներին մէջ երկու սեռն ևս միատեղ պէտք է սովորեն և բոլոր դպրոցներին մէջ, նաեւ համալսարաններում (բացի մայրական դպրոցներից) ուսուցիչներ պէտք է լինեն անխտրաբար երկու սեռից ևս: Բոլոր այն օրէնքները, որոնք պարտաւորեցնում են կնոջ հնազանդվել իր ամուսնուն, պէտք է ջնջվեն: Ամուսնների փոխադարձ յօժարութեամբ, երբ նրանք երեք անգամ յայտարարեն դատարանին այդ մասին վեց ամսվայ ընթացքում, ամուսնալուծութիւնը պէտք է թույլատրվի: Կնոջ զոյքը պէտք է բաժանվի ամուսնու զոյքից եւ նրա ազատ արձագանքութեան տակ լինի: Հօր հետամուտութիւնը պէտք է թույլատրվի (այսինքն անհարգաւոր գաւառները կամ նրանց մայրերը կարող են ապացուցանել հօր ով լինել և հայրը ստիպված է ճանաչել որդուն): Բոլոր հա-

մին յայտնի է «Մշակ» ընթերցողներին. բազմաթիւ մանր-մունք դէպքերի մասին չէ գրուել: Օր չէ անցնում, որ այդ անկող հիւրը իր հրեղէն լեզուները այս ու այն կողմը չը տարածէ ընդհանուր սարսափ, ողբ, լաց ու կոծ եւ մեծ դրամական կորուստներ առաջ բերու համար: Կար ժամանակ, որ հրդեհները հազուագիւտ բաներ էին, բայց այժմ սովորականների շարքն են անցնում:

Այդ ամենախոշոր աղէտը նոյն իսկ առաջվայ ցնցող, սարսեցնող տպաւորութիւնն էլ չէ թողնում: Շատերը կը զարմանան, որ այնպիսի մի դպրոց, որը գիտութիւնը անհաւատալի հրաշքներ է անում,—Բագուում մի հրդեհի առաջն առնել չեն կարողանում: Մենք չենք զարմանալ այդպիսի միամիտների վրա: Դրա համար նրանց պէտք է յայտնի լինի այն իրողութիւնը, որ Բագուի հարկւարաւոր մասնագէտներին, գիտութեան վերջին գէշերը իբր թէ գոտիներում խրաճներին, եթէ մղես,—մի կէս մսխալ գիտակցութիւն, լրջութիւն, գաղափարականութիւն չես ստանալ: Եւ իդէպից գուրկ այդ պատուաւոր լեզուներ մի ոչխարային հօտից ոչ մի բանով չէ զանազանվում: Բարձրագոյն մասնագիտական կրթութիւն ստացածները, ունենալով իրանց արժանաւորութեան տակ միլիոններ, մինչեւ այժմ ոչ մի էական օգուտ չեն տուել նաւթարդեւանքութեան տեխնիկային, եթէ կարելի է այսպէս ասել: Հրդեհի առաջն առնելու համար միջոցներ գտնողներին արցանակ էլ է նշանակված, բայց եւ այնպէս չը գտնվեցին մի քանի հոգի, որոնք թողնելին միլիոնների ետեւից ընկնելը և զբաղվելին բազմաթիւ կարեւոր կատարելագործութիւններով, զլխաւորապէս հրդեհի դէմ կռուելով: Ով է գտնվել, որ այդպիսի ծանր աշխատանքով փող աշխատէ, քանի որ բաւական է մի յայտնի դրոշմ կայցնես ճակատիդ եւ վաղը մի քանի հազարներով լրագոր կառավարիչ կը լինես. իսկ հասկանալի է, թէ ինչ բան է լիազօր լինելը...

Եւ այդպիսի մեղեդային անտարբերութեան հետեւանքը այն է, որ այս տարվայ այրված վիշկաների թիւը մի քանի հարիւրից անցնում է եւ հէնց երկու օր առաջ տեղի ունեցած հրդեհը, որ դեռ մինչեւ այժմ ծխում է, հարիւր յիսունից աւելի վիշկաներ կլանեց (Վնաններ

սարակական, վարչական, համայնական եւ այլ պաշտօնները, ինչպէս եւ բոլոր ազատական արուեստները ու պետական բոլոր դպրոցները պէտք է բաց լինեն պաշտօնավարութեան համար ամենքի առաջ, առանց սեռի խտրութեան: Քաղաքացիական, քաղաքացիական (civique) եւ քաղաքական իրաւունքները հաւասար պէտք է լինեն երկու սեռի համար:

Եւ արձանագրեցի օճաղէսի միայն զլխաւոր որոշումները մի գաղափարով տալու համար, թէ ֆէմինիստական շարժումը ինչ ձգտումներ և նպատակներ ունի այժմ: Ամբողջ մասուլը, բացի, ի հարկէ, պահպանողական, կղերական թիւերից, մեծ գովասանքով է խօսում կօնգրէսի գործունէութեան մասին. միայն «Temps» միմիստական լրագիրը նկատել է տալիս, թէ կանայք սխալվում են միանգամայն ամեն բան պահանջելով և թէ առ այժմ մեծ անյարմարութիւն կայ կանանց քաղաքական իրաւունքներ տալու կօնգրէս—ասում է լրագիրը—և կանայք շատ չուտով կը վատտակեն իրանց դատարանական կարողութիւնը եւ իշխանութիւնների աչքում, եթէ կենտրոնացնեն իրանց ջանքերը եւ չափաւորեն իրանց անհամբերութիւնը:

Ձեռ խօսում սեպտեմբերի 8-ին կայացած մեծ բանկէտի ու արտասանած ճառերի մասին եւ վերջացնում եւ յօդուած յայտնելով, որ յաջորդ ֆէմինիստական կօնգրէսը կայանալու է Մօսկվայում, Ռուսաստանի ներկայացուցչութիւնը մէկի առաջարկութեամբ, որ նկարագրեց, թէ կնոջ ժամանկապայայի գործը Ռուսաստանում աւելի առաջ է գնացել, քան ուրիշ երկրներում:

Հ. Առաքելեան

միլիոններով են հաշուում... ընդամենը քսան եւ չորս ժամուժի իսկ մարդկային զոհերի թիւը, այնքան մեծ կապիտալի մեծնելը... ուժ հոգն է:

Հէնց որ սկսւում է հրդեհը, որ գլխաւորապէս գիշերներն է լինում, ահա նախարարներու բերողները խորհրդի գնեկալիտեանը, ինչքան քոռ ու քաջալ գիշերները կան, կլուրում, կանաչ սեղանի կամ նարդիի մօտից ալարելով իրար են գալիս ու եթէ ուղիւնապատ անհետնելով կտոր ճարեցին եւ աղէտը Սեւ քաղաքում է կամ Բիբի-Հէյբաթում,—չտապում են զննապաշտ անելու եւ ապա նորից կլուր են վերադառնում ընդհատված խաղերը սկսելու եւ ՅԵ ԴՈՅԱ սովորականից աւելի ճոխ ընթերցող պատերից համար: Իսկ եթէ աղէտը Բալախանում է, բաւականա՞նք են ծառաների միջոցով տեղեկօնով տեղեկանալով: Ահա այսպիսի մի անմեղ արարողութեամբ են վերջ տալիս այն բոլոր պարտականութիւններին, որոնք դրված են շատ շատերի վրա: Այո, շատ մեղաւորներ կան այդ խնդրում, բայց ո՞վ է մեղադրողը: Ամօթ չէ միթէ, որ այդպիսի բարեխաղող պայմաններում հրդեհի դէմ կուեղու գէշները մի եւ նոյն լախախ ջրմուռներն են, մի երկու բաժնի մը քլուրը, մի քանի թաղիք եւ... առատ թւով մարդկային գերեզմաններ...

Ո՞ր են կորել, ինչո՞ւ են կուրացել այն անապաղէի, քոռ կառավարիչները, որոնք կապիտալիզմի շահերը պաշտպանելու համար անամօթաբար կտրում են աշխատողներին դառն քրտինքով վատաբանած կոպէտները, դուրս են անում, գրկում են անդամալոյծ կամ աշխատանքի որ եւ է այլ կերպ անընդունակ դարձած վատաշխատներին: Թող այժմ հրապարակ դան եւ մաթեմատիկական ճշգրտեամբ որոշեն, թէ թշուառների այդպիսի արհեստ խնդրով քանի տարուում կը վերադարձնեն կապիտալիզմին: Եւ քանի որ, որոնք, տեղի ունեցած երէկվայ հրդեհին քսան եւ չորս ժամուժ...

Ռ. Յովհաննիսյանի

Բ ա գ ու

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Ինչքան հիմնալի Տատիանա եւ ինչքան անտանելի Օնեգին ներկայացրին մեզ օր. Պապանեան եւ Լօդի ամսին 25-ին: Մէկի ձայնի դիւպօնը մեծ, ծաւալը լայն, ընտելութեան ձկուն, տեմբը զանգային եւ ոյժը զօրեղ, իսկ միւսի ձայնը բաղկացած միմիայն մի քանի միջին նոտաներից, ոչ տեմբը ունի, ոչ անհունութիւն, ոչ ոյժ եւ ոչ մի մաքուր նոտա: Մէկն ունի անանակառարկաբարձրված չլօյս, միւսը կարծես զեռ նոր է սկսում երգել: Մէկ «Պոստովանում եմ քեզ» արիայի փշաքրած բաւական է... Ինչո՞ւ կարած ձայնով զԱՍԻ—բարիտոնին դուրս են բերում հրաշալի բարիտոնի հետ: Ինչո՞ւ այսպիսի հակադրութիւն: Միթէ ցանկալի է: Ի հարկէ ոչ, բայց ո՞վ է մեղաւորը...

Այստեղ մեղաւոր են թատրոնը, օր. Պապանեան եւ հասարակութիւնը: Թատրոնը չէր պէտք է թող տայ բաղաձայն երգչին բնի դուրս գալ երգելու: Օր Պապանեան, որպէս մի բարձր եւ լուրջ օպերային արտիստուհի, պէտք է ամեն ջանք դրած զին յանձն չտանել մի մեծած ձայնի հետ երգակցելու: Իսկ հասարակութիւնը, որ միակ պատասխանատուն է իր մէջ ծագած փորձութիւնների, իդուր իր տրտմանը լուրջութեամբ է յայտնում եւ պլատոնական ազնուութեամբ բաւականա՞նք ինչ հասարակութիւնը առաջին անգամ իր դժգոհութիւնը պարզ ցայ տար Դէմօնին, Լօդի կրկին բնի չէր դուրս գալ:

Եկել էին, ըստ երեւոյթին, Տատիանային լուսնու, բայց կողմնապահներն ասում էին Օնեգինին տեսնելու համար է հասարակութիւնը թատրոն լցվել:

Տեսնում էք...

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ՍՂԱՆՈՒՑ

Սեպտեմբերի 15-ին

Մի քանի ժամանակ առաջ քաղաքում լուր տարածվեց, թէ տեղացի բնակիչ Ստիկո Դաւթեանի տան մէջ յայտնվել է սուրբ պատկեր: Բազմաթիւ այցելուներ գնում էին հրաշագործ պատկերի տեսութեան, մանաւանդ կանաչ, որոնցից աւելի ջերմեանները վատում էին պատկերի առաջ մոմեր եւ նոյն իսկ աշխատողը տալիս: Հետաքրքրված անձանք գնացինք պատկերի տեսութեան: Տեսանք մարմարեայ քարի վրա քանդակած պատկեր, որ ներկայացնում էր կնոջ գլուխ, երեսում էր, որ այդ քարը մի քանդակի կտոր էր: Տանտէր Դաւթեան այսպէս

բացատրեց այդ պատկերի երեւոյթը. երկուշաբթի կէս գիշերին յանկարծ աղուով են հանում հաւերը, որոնք նստած են եղել թղթեւ վրա: Տանտիրոջ երիտասարդ որդին աղմուկից դարձնում է եւ բարձրանում է թղթեւ վրա, կառնալով իմանալ պտտանալը: Այստեղ նա յանկարծակի տեսնում է բերդի պարսպի վրա դրած մի պատկեր. նա ցած է բերում այդ պատկերը եւ ցոյց տալիս ընտանիքին, որը կարծում է, թէ երկնքից Աստուածածնի պատկերն է իջել: Ցանկանալով պարզապէս որոշել պատկերի ինչ լինելը, Դաւթեանի կինը գնում է գրքաց կնոջ մօտ՝ խնդրելով պարզել իրան այս երեւոյթը: Գրքացը գլուխը ծեծելով յայտնում է, որ պատկերը սուրբ է եւ թուղ է թէլեթի վանքին՝ ժամանակաւորապէս նրանց տան մէջ հիւր լինելու համար: Գրքացի այս խօսքերը արագութեամբ տարածվում են կանանց շրջանում եւ բազմաթիւ յաճախորդներ գրաւում: Երբ մենք յայտնեցինք տանտիրոջը, որ կարծեցեալ սուրբ պատկերը քանդակագործական մի կտոր է, նա չը հաւատաց մեզ եւ երկուշաբթեւեամբ ցոյց էր տալիս կնոջ գէժի վրա իբր թէ գերբնական լույսը: Մեր գործակալն այցելեց այդ տունը եւ բացատրելով տանտիրոջը պատկերի հասարակ լինելը, արգելեց զրանց մտորեցնել ժողովուրդը: Ներկայ դէպքը արդեն չէ որ եւ է խաղի կամ ներթափանց ակնկալութեան, այլ հետեւանք է մեր խաւար ամբողջ դարաւոր արմատացած նախապաշարմունքի...

Սեպտեմբերի 1-ից տեղական իգական դպրոցը վերածվեց Մարիինսկի դպրոցի, որի պահպանութեան համար կառավարութիւնը տալիս է 1500 ռ. տարեկան, իսկ քաղաքը՝ 600 ռ. դպրոցի մնացած ծախսը պէտք է ծածկվի թոշակաւորաբար: Դպրոցն այս տարի ունի միայն երկու դասարան եւ երկու պատնասական:

Մեր նամակներից մէկում, եղանակներ Սոնախում հիւանդանոց ունենալու անհրաժեշտութիւնը, սակայն այդ հարցը մեր քաղաքի հայերի համար ծիծաղելի է միայն Պէտք է երկնքից գումար իջնէ, որ Սոնախում հիւանդանոց հիմնվի, որովհետեւ «քաղաքը միջոց չունի»: Այս օրերս մենք առիթ ունեցանք մի լուսաւորար կնոջից լսելու, որ ինքն իր ամուսնու երկարատեւ հիւանդութեան պատճառով ստիպված է իր ընտանիքով Թիֆլիս գաղթել, որովհետեւ այստեղ չը կան ոչ՝ ձրի բժշկական օգնութիւն եւ ոչ ձրի դեղեր: Քաղաքի աղքատների դրութիւնը հիւանդութեան դէպքերում շատ ցաւալի է, նրանք բժշկվում են անային միջոցներով եւ կամ ժամանակն է նրանց առողջացնում: Սակայն Սոնախում հիւանդանոց հիմնելը այնքան էլ դժուար չէ, ինչպէս կարծում են մեր գումայի դեկաւարները, այսպիսի հարկաւոր է միայն բարի կամք եւ եռանդ, որից նրանք տարաբարբարար գուրկ են: Սոնախում կայ մօտ 1500 տան բնակիչ, հաստատապէս կարելի է ասել, որ ամեն մի տուն հիւանդանոցի պահպանութեան համար տարեկան միջին թւով ութսուութեամբ կարող է տալ 2 ռուբլի, քաղաքում կան երեք բժիշկ եւ ֆէլդշերներ, որոնք յայտնի վարձատրութեամբ կարող են օրական մի-մի ժամ աշխույժ հիւանդանոց: Սոնախում հիւանդանոց ունենալու հարցը ամենակարեւոր հարցերից մէկն է եւ այս գործը պէտք է գլուխ ընդ մեր ապագայ գումայի կազմը:

Յ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻ ԳԱՒԱՌԻՑ

Դարադալա գիւղ, սեպտեմբերի 21-ին
Նշանակը քանի գնում աւելի եւ աւելի ճշնուում է գիւղացուն. երկինքը ամպ է ու խաւար, ամպ է եւ գիւղացու սիրտը: Ի՞նչ անէ նա, անձրեւ ու ձիւն, կարկուտ ու չոք կրելով վերջապէս հնձեց, վերջապէս իր ցանածը, այժմ մնում է միայն կալել, աղաւտել հնձածը եւ սկսել ընտանիքի պէտքերը հոգալ, բայց այդ նրան չէ աջողվում: Երկինքը ծածկված է ամպերով եւ մերթ անձրեւում է, մերթ պարզում: Օրը մի քանի անգամ 10—15 ասլը հացաբոլոր փոխում է կալի երեսը եւ կրկին ժողովում: Բայց միայն այդ չէ. կէս գիշերին, ամենախիտ, ծակող ցրտին նա պիտի գնայ քաղաք հնձած կող բերելու: Այս ամենի վրա հնձածը կալում է ծլում, իսկ երկխան տանը հաց է ուղւում, ինքը տեսնում է այս ամենը եւ հնար չունի այդ դրութիւնից դուրս գալու, այլ ամենայն հանդարտութեամբ տրանում է բնութեան այս հարուածները: Հոգեկան մեծ ոյժ է հարկաւոր այս ամենին դիմանալու համար եւ մեր գիւղացին ունի այդ ոյժը: Պէտք է ապրել գիւղում, աչքով տեսնել եւ

հասկանալ, որ գիւղացու ձեռք բերած ամեն մի հատիկի մէջ արեւն կայ: Անցեալ տարւոյ երաշտից գիւղացին աւելի չնորհակալ էր, քան այս տարւոյ առատութիւնից, որ իր քիչը կարողացաւ չուտով ժողովել եւ կողմնակի կերպով էլ փող աշխատել, այն ինչ այս տարի նա հաց ունի եւ չունի եւ չէ էլ կարող ուրիշ գործի լինել:

Այս սեպտեմբերի մէկից գաւառի գիւղական վարչութիւնները փոխվում են նոր ձեւի: Առաջ գիւղերը կառավարվում էին տանտէրերով, որոնք անմիջապէս ենթարկվում էին պրիստաներին եւ գաւառապետներին, իսկ սեպտեմբերի մէկից, պ. կառավարչապետի նոր կարգադրութեամբ, գիւղերը կրկին ունենալու են իրան տանտէրերը, բայց երկու կամ երեք հարեւան գիւղերի համար լինելու է մի ստորօրտա կամ աւագ տանտէր, որի գործն է հսկել իրանց յանձնված գիւղերի հասարակական եւ կառավարչական պէտքերի վրա: Նրանց վրա հսկող նշանակվում է ստարչինան, որին չորս ընտրեալների միջից ընտրում եւ հաստատում է պ. նահանգապետը, նրա հետ նշանակվում են երկու ընկերներ, որպէս գիւղական դատաւորներ եւ մի գրագիր: Սրանց բնական ընտրված է Մագարալիս յոյն գիւղը, որ քաղաքից հեռու է տասը վերստ եւ գտնվում է գաւառի 23 գիւղերի կենտրոնում: Բոլոր պաշտօնականները ընտրվում են չորս տարով: Առաջին անգամ ստարչինայի պաշտօնով բոլոր 23 գիւղերի համար ընտրված է մի յոյն Այս նոր ձեւը մի տեսակ գիւղական ինքնավարութիւն է եւ բոլոր պաշտօնականների համար էլ բաւական գործ կայ անելու, եթէ միայն կառավարութեան տուած օրէնքները մեծած տառ չը մնան:

Ա. Փ.

ՆԱՄԱԿ ՄԵՏՉԱՐԳԻՒԹԵԱՆ

Մեր ժողովրդի անտեսական դրութիւնը քայքայող պատճառներից են եւ նրա մէջ արմատացած տեղեւորութիւնները, այսպէս է օրինակ, հանրաժանօթ քեղեկը: Դեռ այս հարցի մասին յաճախ խօսվել է մեր պարբերական մամուլի մէջ, սակայն թող ներկի մեզ այս անգամ էլ մի քանի խօսք ասելու:

Այդ տեղեւորութիւնը փամբակում եւ նրա մօտիկ չըլակալցում աւելի լայն չափերով է տարածված: Այս անցած ս. Խաչի տօնին հագիւ թէ Դարաբալիսայում գտնվէր մի մարդ, որ քեղեկի հաւերված չը լինէր: Սովորութիւն է ամեն տարի սուրբ Խաչի տօնին իւրաքանչիւր տուն, որ ունեցել է այդ տարւոյ ընթացքում մեռել, կազմում է մի մեծ քեղեկ եւ հրաւիրում է իր բոլոր բարեկամներին, ծանօթներին եւ նոյն իսկ հարեւաններին: Այս վերջիններս էլ փոխադարձաբար քեղեկին նախընթաց օրը ընծայ են ուղարկում իրանց բարեկամին ոչխար, արագ եւ կամ մի այլ բան: Ինչպէս քեղեկ սարքելը, նոյնպէս եւ ընծայ ուղարկելը ճանաչված է չափազանց պարտադիր բան: Թէ հարուստ եւ թէ աղքատ անպայման կատարում են, բաժնաւորներն աստարայ չը լինելու համար: Ընծայ ուղարկողը 1—5 ռուբլի ծախս է անում, որ ինչ է հետեւեալ օրը մի փոքր հաց ուտի, իսկ քեղեկատէրը ահապին ծախս է անում, որ մի քանի տանեակ կուշտ մարդիկ կերակրէ: Գոնէ աղքատներին լաժանկէր այդ քեղեկը:

Ինչպէս ընթերցողները տեսնում են, այս սովորութիւնը մի մեծ չարիք է մանաւանդ փամբակում եւ գրեթէ մի եւ նոյն ժամանակ չունի եւ ոչ մի բարոյական նշանակութիւն: Ցանկալի էր, որ այդ տեղեւորութիւնը բոլորովին վերանար մեր միջից: Ժողովրդի մէջ կայ արմատաւորութիւն, ամենքը գանգաւորվում են, որ դա մի ծանր բեռ է իրանց համար: Մնում է, որ քահանաները աշակցեն այս բանին: Մեր կարծիքով բաւական է մի քանի անգամ քարոզել եկեղեցու բնակից, մանաւանդ այդ տօներից առաջ եւ սովորութիւնը ինքն ըստ ինքեան, կամայ կամայ, կը վերանայ:

Գ. Վարժապետեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, սեպտեմբերի 7-ին

Կրթական գործը Թաւրիզում զեռ եւս իր սաղմային վիճակից դուրս չէ եկել: Այս տրտուր կացութեան գլխաւոր պատճառներից մէկը ներքին անձուկ վիճակն է, որը թող չէ տալիս տեղական պահանջներին լիովին գոհացում տալ: Բարձրագոյնով զարգացնել կրթական մակերեւոյթը, Լիւալայի Հայկազեան եւ Թաւրիզի դպրոցների հոգաբարձութիւն, ի նկատի ունենալով այս ցաւալի դրութիւնը եւ տեղական պահանջներին գոհացում տալու անհրաժեշտութիւնը, դիմել է կրթաւեճ ազգային

ների աջակցութեան եւ ուրախ է յայտնելու, որ նորհիւ այս դիմումներին, վերջերս ստացել է հետեւեալ նուիրատուութիւնները եւ այս նուիրատուութիւններից խրախուսված, արդէն բաց է արել չորրորդ դասարան:

Հոգաբարձութիւնս մեծ յոյս ունի, որ հետգհետ հետեւեալ նուէրներով պիտի կարողանայ նորանոր դասարաններ աւելացնել եւ կրթական գործին տալ ցանկալի լայն ծաւալը եւ միւս կողմից դպրոցի ապագան հաստատ հիմունքների վրա դնել, բաւարար ֆօնդ կազմելով:

Հոգաբարձութեան անդամներից պ. Բաղդասար Մէլիք-Սարգսեանց, վերջերս Կովկաս ճանապարհորդելիս, անձամբ հաւաքել է եւ յանձնել է հոգաբարձութեան հետեւեալ նուիրատուութիւնները:

Պ. Համբարձում Կարապետեանց, պարսկահայերի կրթական գործին յատկացնելու նպատակով մի գումար էր թողած պ. Ալեքսանդր Մէլիք-Սարգսեանի կարգադրութեան, այդ գումարը իր տոկոսներով միայն, 1750 ռուբլի, նուիրված է Լիւալայի Հայկազեան եւ Թաւրիզի երկու դպրոցներին իրեն ֆօնդ:

Պ. Ալեքսանդր Մէլիք-Սարգսեան նոյնպէս իր կողմից նուիրեց 1000 ռուբլի, պ. Միքայէլ Արամեան 1000 ռուբլի, Ա. Զ. Թիւրքի Սօֆիա Հայրապետեան 100 ռուբլի, պ. Կ. Եղաբեք Թուսեանեան 200 թուան, պ. Նիկիտ Անահանց 50 ռուբլի: Պ. Նիկիտ Անահանց խոստացել է ամեն տարի տալ 50 ռուբլի Հոգաբարձութիւնս որոշել է այս պարտքների անուամբ մի ան անգամ:

Հոգաբարձութիւնս հրապարակով յայտնում է իր նուիրատուութիւնը վերոյիշեալ նուիրատու ազգայիններին:

Ի դիմաց հոգաբարձութեան՝
Յակովբ Մէլիք-Սարգսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Կովկասի Նորաշեն եկեղեցում ընտրողական ժողովի ժամանակ տեղի են ունեցել մի քանի անպատեհութիւններ, որոնց վերաբերութեամբ լուրջ է յայտնված թեմական իշխանութեանը՝ բեկանելու եղած ընտրութիւնը եւ նշանակելու նորը: Այդ անպատեհութիւնները հետեւեալներն են. 1) քուէարկութեան իրաւունքից զրկվել են ծխականներ, որոնք ունեցել են ընտրողական իրաւունք. 2) ժողովին մասնակցել է մի հարւած անձ, որ թող է տուել հայհոյանքներ եւ սպառնալիքներ եւ 3) մասնակցել է մի անձ, որ քրէական դատաւարութեան տակ է:

«Արեւելք» լրագիրը գրում է. «Ուրախութեամբ կը լսեմք թէ Վիեննայի Միթիթերեան միաբանութեան երկու հատուածներուն միջեւ ծագած անհամաձայնութիւնը մօտ ատենէն վերջնական կարգադրութիւն մի պիտի գտնէ: Ուրախ ենք մանաւանդ ծանուցանելու, թէ Արախայր Այտընեան արքեպիսկոպոս, կուսակցութեան միջին կողմէ իր վրա բանեցուցուած ազդեցութիւնը թօթափելով, հակեր է հմուտ միաբաններուն կողմը, եւ հաւանական է որ առաջիկային տեղի ունենալիք միաբանական ընդհանուր ժողովին մէջ իր ձայնը բարձրացնէ ի նպատ անոնց: Միաբանութեան տարէց անդամներուն փափաքն է եղեր դադարեցնել «Հանդէս Ամսօրեան», առարկելով որ հասոյթը չի բաւեր ծախքը զոյցելու: Մանօթ անհամաձայնութեան կարգադրութիւնը այդ փափաքին իրագործումը պիտի արգիլէ եւ «Հանդէսը» պիտի կրնայ ըստ առաջին հրատարակութիւն—աշակցութեամբ այն վարդապետներուն որոնք անհամաձայնութեան պատճառաւ ձեռք քաշած էին անկէ: Արդէն այս տարի 50 բաժնետիր ստորագրուած են այդ թերթին համար, որ մեր մէջ գիտական բանասիրութեան միակ օրգանն է:

Եկեղեցական ընտրութիւնների ժամանակ, որոնք տեղի ունեցան կիրակի, սեպտեմբերի 24-ին, Զուղուրեթի Աստուածածին եկեղեցում ընտրվել են Շահազարեան Շահազար, Պօպօկեան Զաքար եւ Դեմուրեան Բեժան. Նաւթլուրի եկեղեցում Աստուածատրեան Յովսէփ Թուսեանեան իշխան Նիկոլայ եւ Գուրգէնեւ գեան Յովհաննիս:

Ստացանք Թիֆլիսի Զրիկներնց ս. Կարապետ եկեղեցու երէցի Դանիէլ 1899 թուականի համար: Եկեղեցին տարվա ընթացքում ունեցել է արդիւնք 1914 ռուբլի 95 կօպ. (որից 696 ռուբլի նուէրներ եկեղեցու վերանորոգութեան համար), իսկ ծախս եղել է 1790 ռուբլի 20 կօպ. (որից 600 ռուբլի վերաշինութեան համար): Զրիկներնց եկեղեցին տարեկան 100 ռուբլի նպաստ է տալիս զիւրկնային դպրոցի պահպանութեան համար:

Մայրաքաղաքի լրագիրներին խօսքով, նոյնիսկ

բերի 1-ին կառավարչական սենատի քրէական վճռաբեկ դեպարտամենտը կը քննի Բագուի նախնական դատարանի նախկին պրօկուրօրի (վերջը Թիֆլիսի դատաստանական պալատի անդամ) Ստալինսկու եւ նրա քարտուղար Ա. Նիխիժովի գործը, որոնք մեղադրուած են պատժական կանոնադրութեան 354 եւ 362 յօդ-ւանքներ համաձայն կը մեղադրուի օրէք-պրօ-կուրօրի օգնական Շիդլովսկի:

ԱՆԱԼՔԱՆԻՑ մեկ գրում են. «Նախնական պետական քաղաքի նորոգումը իրագործելու, որոնք երէկ սեպտեմբերի 21-ին, երդագրային եւ ստանձնեցին իրանց պարտականա-նութիւնները: Շուտով կը կայանայ քաղաքա-յին աւագի ընտրութիւնը: Հին աւագը հրա-ժարուած է քուէարկվուց, եւ ընդհանրու-թեան կողմից ամենից շատ ցանկալի է հա-ժարվում աստիճանաւոր Յովհաննէս Մեծա-տունեանի ընտրութիւնը, որ լիազօր է ընտր-վել ձայների ահալին մեծամասնութեամբ: Պ. Մեծատունեանը լաւ հասկանում է օրէնքները եւ անտեսական գործերը: Կարծում ենք, որ եթէ քաղաքային աւագի ներկայ ռոճիկը ա-ւելցնուի, նա կը համաձայնի քուէարկվել:

ՂՈՒԲԱՅԻՑ մեկ գրում են. «Ղուբայի գա-ւառի «Նիդր-Ձինգա» հողերը դարձեալ իրանց վրա ուղարկուած են դարձեալ: Առ այժմ երեք հարուստ բազուցի գրամատերեր՝ Շի-բուկ, Վաստաֆ եւ Բէյ վեց վիշկա են կա-ռուցել, ամեն օր նախքան նախնա հորերից երեսնական տակաւ, իւրաքանչիւրի մէջ քսան հինգ պուդ եւ այդ նախքան ուղարկուած են Բա-զու: Ասում են, որ այդ քանակութիւնը կա-ւելանայ եւ այժմ իսկ աւելացած կը լինէր, եթէ արդեւ չը դառնայ նախքան հորի մէջ ըն-կած մի քանիս, որը դեռ դուրս չէ հանված: Բայց յիշված երեք գրամատերերից, կան շատ մարդիկ, որոնք հողաբաժիններ ունեն նախ արդիւնագործելու համար. ասում են, մի երկ-րաչափ հազարներ է վաստակել այդ հողաբա-ժինները առուծախի ժամանակ Բացի դրա-նից, Բագուի գրամատերերը ինչ (ՄՈՒ) եւ Նիխու (ՄՈՒ) գրամատերը եւ այլ տեղե-րում գլխապատու հողեր են գնում: Մօտիկ չէ ուրեմն այն բաղդաւոր ապագան, երբ մեր Բագուն աւելի կը հարստանայ մեր իսկապէս հարուստ Ղուբայի չնորհու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Ա. Ի. Ս. Տ. Ի. Ա.

Վերջին 4-5 տարիների ընթացքում քաղա-քական ճգնաժամի դրութիւնը աւստրիական պետական կեանքում սովորական երեւոյթի ընաւորութիւն է ստացել: Անվերջ ձգձգվում է այդ ճգնաժամը եւ աւստրիական պետական անձանց ջանքերը՝ մի կերպ վերջ դնելու նրան, մի կերպ ուղիղ ճանապարհի բերելու իր սո-վորական ընթացքից դուրս եկած քաղաքական կեանքը, ոչ մի արդիւնք չեն տալիս: Տարիներ առաջ, ինչպէս եւ հիմա, իրար դէմ առ դէմ կանգնած են երկու թշնամի բանակ—գերմա-նացիները եւ չեխները—պատրաստ իրենք մի վայրկեան օրհնական կտի մղելու իրանց ազ-գայնական շահերը պաշտպանելու համար: Եր-կարատեւ պայքարը արդէն չափից աւելի զոր-գուղ է երկու կուսակցութիւնների ներկայա-ցուցիչների զարդոյթը եւ ոչ մէկը տրամադիր չէ ամենափոքր զինուորական անկ միւսում:

Աւստրիական կայսրի սպանական նկատու-ղութիւնը լինական կտրի նախագահ Եւֆօր-սկուն, թէ պարլամենտի արձակուած վերջին սահմանադրական միջոցն է, որին դիմում է կառավարութիւնը Աւստրիայի ներկայ քաղա-քական վիճակը բարեփոխելու համար, ոչ մի ազ-գայնութիւն չունեցաւ մարտնչողների բոլորը: Վաճակաբեր վրա եւ ինչպէս ցոյց են տալիս գերմանացիների եւ չեխների մօտ օրերու մի հրատարակած ընտրողական յայտարարագրերը, ոչ մի փոփոխութիւն տեղի չէ ունեցել երկու կուսակցութիւնների ծրագիրների մէջ:

Աճիկ առաջ ունենալով թէ վերոյիշեալ հան-գումանքը եւ թէ այն, որ ընտրողական օրէնքները նորին են հիմա, ինչպէս եւ արձակված պար-լամենտի ընտրութեան ժամանակ, եւրօպական մասերը, խօսելով այս հարցի մասին, համա-րեալ միաձայն գոչւում են, որ նոր ընտրելի պարլամենտը ոչ մի բանով չի տարբերվի ար-ձակվածին եւ օրտառակցի կորստաբեր սիս-տեմը նոյնպիսի անսանձ կը թաղաւորէ նրա մէջ, որպէս թաղաւորում էր առաջ՝ բոլոր-վին կանգնեցնելով աւստրիական պետական կեանքի մեղման:

Ընդհանրապէս, տեղի են ունեցել մի քանի փոփոխութիւն, որոնք թոյլ են տալիս գոչւել ամե-նայն հաւանականութեամբ, որ առաջիկայ ընտ-րութիւնները կը կատարվեն աւելի բարեփոխ-միջոցներով: Ազդեցութեան տակ, կընտրվեն ա-ւելի կատարի մրցողներ, ուստի եւ ապագայ օրէնսդրութիւնը, փոխանակ ծանրախոհ դատողու-թիւնների եւ լուրջ ջանքերի, կը զարգվեն պարլամենտում սկսողականներով, իրար օժիք ըն-դնելով, կատուի պէս մաւելով եւ այնպիսի գործիքների վրա ռոճելով, որ խլացնէին հակա-ռակ կուսակցութեան ճառագիւտների ձայնը: Տեղի ունեցած փոփոխութիւնը զլիստորն այն է, որ թէ չեխական եւ թէ գերմանական կուսակ-ցութիւնների ֆրակցիաները, ի նկատի առնելով ապագայի անողոք պայքարը, միացել են մի-մեանց հետ, մի կողմ դնելով իրանց մէջ ու-նեցած քաղաքական ծրագիրների տարբերու-թիւնները: Գերմանիայի ազատամիտները հաշ-տութեան ձեռք են մեկնել հակահրէականներին եւ արմատականներին՝ «պաշարված դրութեան» մէջ գտնվող գերմանական կուսակցութեան պաշտ-պանելու համար, իսկ երկուստար չեխներն միացել են հին-չեխները եւ ֆէօդալները՝ չեխա-կան լեզուին եւ բօնիմական պետական իրա-ւունքին ապարէզ բանալու համար:

Անուշտ մեր համակրութիւնը չեխների եւ առհասարակ աւստրիական պաշտպանի կողմն է, որոնց մի կողմից ճշնում են գերմանացիներ-ը, իսկ միւս կողմից ունգարացիները: Որքան էլ անհամակրելի եւ դատապարտելի լինէին պայքարի այն ձեւերը, որոնց ստիպված դի-մում են չեխները, որպէս թոյլ կողմ հօրի դէմ, այսու ամենայնիւ ոգեւորիչ տպաւորութիւն են թողնում այն եռանդները գործունէութիւնը, որ ցոյց են տալիս չեխները իրանց ազգայնական իրաւունքները պաշտպանելու համար եւ ան-սահման սէրը դէպի իրանց մայրենի լեզուն՝ դէպի ամեն մի ազգութեան այդ անգնահատելի դանձր:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍԻՑԻՑ

Վ. ան, օգոստոսի 22-ին

Երկուսանէ սկսեալ տեղոյ միացեալ բոլոր վարժարաններն ալ իրենց վականի շրջանն ա-ւարտելով՝ վերադառնեցան: Այս առթիւ կարելի չէ առանց քանի մը դիտողութիւններ ընելու անցնիլ:

Վանի ծխական վարժարանները, որոնք թա-ղական աղաներու քանաճողներուն կապված են, միշտ անկարգ, անկանոն շարունակութիւն մը ունենալու պատճառով թիւնն ունին զոր-բաղդաւոր Արդէն մեր դպրոցներու հասցի-նները ընդհանրապէս եկեղեցիներուն պատկա-նեալ կալուածներն են: Գոյնաւան եւ ապա թո-շակներէ՝ որոնք քիչ մաս մը կը կազմեն՝ աշա-կերտներու կողմէն ամբողջովին չի վճարուե-լուն պատճառաւ: Արդ, այս պատճառաւ միշտ կը տեսնենք ուսուցիչներ, որոնք ամիսներով դրամի երես չեն տեսնար, եւ կամ այս ու այն խանութպանին հետ կտրի մէջ են՝ թաղական-ներու կողմէ յանձնարարութեան համեմատ այդ խանութներուն վարձքը հաւաքելու համար ի-րենց ամսականներուն փոխարէն: Ըստ որում այդ կրթական պաշտպանները ուսուցիչ ըլլալի ի դատ հաւաքելի ալ են, եւ դատապարտուած գէշ-մարդ ըլլալու վարձակալներուն հետ:

Այս մեծ ու խալտառակ անպատեհութիւնը շատ անգամ պատճառ կըլլայ ուսուցիչներու խմբովին կամ անհատապէս հրաժարելուն, որով դպրոցի մը ծրագիրը ամեն տարի փոխուելու եւ կրթական գործին վնասելու բնոյթը կը ստանայ:

Այս նոր շրջանին համար, քանի մը հացկա-տակ անձեր, դոմինիկան պետութեւ մոլեռան-դութիւնը շահագործելու ձեռնարկ մը ըրին են յաջողեցան առ այժմ: Այդ անձերն են Նա-թանեան Պօղոս եւ Գրիգոր, եւ Բիւզանդեան Օհանէս անուն անձերը, որոնք համոզեցին դո-մինիկաններու մեծաւոր հ. դը-Պրանսը, գոր-ծը աւելի հաստատ հիմքերու վրա դնելու հա-մար դպրողական գործն ընդարձակելու ձեռ-նարկիլ՝ ուսուցիչներն անպայման կերպով կա-թօյլի ըլլալու պայմանաւ: Ուստի առաջարկե-ցին իրենց ուսուցիչ պ. պ. Պետրոս եւ Արա Բարադաճեաններուն կաթօյլի ըլլալ՝ խոստա-նալով միանգամայն ամսականին աւելցնել: Ա-նոնց մերժումը վրա ուրիշ ուսուցիչներու դի-մեցին, որոնք ամենայն սիրով յանձն առան այդ պաշտօնը եւ պայմանները: Եւ որովհետեւ ուսուցիչները ազգային դպրոցները լքած են քանի մը դրուշ աւելի ամսականի համար, ու հակառակ իրենց անցեալ տարուան ազգա-կրթական պրօպագանդային իրենք քայլ մ'ալ

առաջ կանցնին՝ պաշտօնապէս կաթօյլի արձա-նագրուելով, մեկ կը մնայ արհամարհանք մը նե-տիլ ստոնց երեսին ու թքնել այդ տեսակ բա-րոյականի մը վրա...

Պէտք է խոստովանիլ, որ հ. Անտօնը խիստ հակառակ էր դոմինիկաններու այդ մոլեռանդ վարձուքին եւ այդ իսկ պատճառաւ պետերը իրենց ամբողջ ջիգուհտութիւնները, էնթրիք-ները, կեղտոտութիւնները ի դոմ գրին եւ յաջողեցան հ. Անտօնը իբր անհատաւորի մ ցոյց տալով Պօլսի կաթօյլի պատրիարքարանին հե-ռադրու դաջն կանչել տալ Պօլսի կրօնի թէ հ. Անտօնը պիտի պարտաւորուի հետեալ վա-նէն՝ ուխտելով այդ մասին վրէժնադիր ըլլալ պետերէն:

Ձեզ գրած էի տեղիս անգլիական հիւպատո-սի կողպատուիլը Շատախու կողմերը: Այս շար-թու անոր կողպատուած ապրանքները ամբողջն ալ ետ կ'սկան կառավարութեան ձեռքով: Հիւ-պատոսի սպաննած քանի մը քուրդերն ալ վրա գացին:

Հակառակ բարձր կառավարութեան հրամա-նի, տուրքերն ամենայն խոստովանում կը հա-ւաքուին՝ առանց տարիի մը բաշխուած ի նկա-տի աւելուելու, կամ կարողն ու անկարողը ի-րարմէ զատելու... Խորէն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Թիւրքացի դեսպանութիւնը Թէհրանում առաջարկեց Բ. Դրաւը հիմնել Թիւրքաց արդիւ-նաբերութիւնների մշտական ցուցահանդէսներ Պարսկաստանի Թիւրքաց հիւպատոսարանների եւ փոխ-հիւպատոսարանների մէջ՝ տեղական վա-ճառակաւորներին ծանօթացնելու համար Թիւրքա-կան ապրանքների հետ: Բ. Դրաւը ուղարկեց այդ առաջարկութիւնը առեւտրի եւ հասարա-կական աշխատանքների միջնորդութեանը պատշաճաւոր տնօրինութեան համար:

—Կովկասից Կ. Պօլսի գնացած մասնագետները գաղթականները, թուով 215 ընտանիքներ, սուլ-թանից 560 լիւրս գրամական նպաստ ստացան: Բացի դրանից սուլթանը էլ 250 լիւրս ուղար-կեց յոյ կանանց բաժանելու համար: Գաղ-թականների տրամադրութեան տակ է դրված «Լեւէթ» շրջանը, որը մաս մաս կը փոխա-դրէ նրանց Սեւ ծովի ափերը բնակեցնելու հա-մար Տրապիզոնի միջին Օրդու:

—«Temps» լրագրին հետագրում են Կ. Պօլ-սից. «Էթրաքում» ռուսական հիւպատոսի պաշ-տօնակատարը եւ նրա քարտուղարը մօտ օրե-րում են թիւրքիկցիներ քրդերի յարձակմանը՝ Էթ-րաքում եւ Երզնկայի ճանապարհին: Հիւպա-տոսին ուղեկցում էին Թիւրք զինուորները, բայց յարձակվողները չափազանց բազմաթիւ էին: Կցորդ զինուորներից երկուսը սպանվեցին: Հիւ-պատոսը եւ քարտուղարը փախան եւ ազատ-վեցին թողնելով իրանց բոլոր ծանոցները:

—«Berliner Tageblatt» լրագրի Վիէնայի թղթակիցը հաւատարմում է, թէ պետութիւն-ների դուր չեկաւ արքայադիր Գեօրգիի այն քայլը, որի նպատակն էր ստանալ կրեռեի ինստիտուտի պետութիւնների համաձայնութիւնը, որպէս զի կրեռեիները կարողանան անձամբ տնօրինել իրանց կողմը վերականգնել վիճակը: Նոյն թղթակիցը հաղորդում է, թէ Կրեռեն Յունաստանի հետ միացնելու խնդիրը պաշտօ-նապէս հերթական հարցերի կարգին է անց-կացրած: Վիէնայում համարում են, որ ան-յարմար րօպէ է ընտրված այդ նպատակին հա-սանքը համար, որովհետեւ պետութիւնների նորերում հազիւ աջողից դադարեցնել մակե-դոնական հարցի զարգացումը եւ նրանք չեն կամենայ գործել սուլթանին Կրեռեի խնդիրը նորից բարձրացնելով: Կղզու վրա թէ եւ խա-ղաղութիւն է տիրում, բայց իրերի դրութիւնը այնպէս հաստատուն չէ այնտեղ, որպէս ցան-կալ էր: Դա երեւում է այն հանգամանքից, որ միջազգային զօրքերը մինչեւ հիմա չեն հե-ռացել կղզուց: Հաւատարմում են, թէ արքա-յորդի Գեօրգի մտադիր է գործել իտալիայի միջոցով, ուստի եւ կարճ ժամանակից յետոյ կուղեւորվի Հոմ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

25 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Այն զօրքերը, որոնք նա-նակված են Մուկիլէնը գրաւելու, կենտրոնա-ցան Ինկու-Ուայէն գծի վրա. դրանք բաղ-կացած են 11 բաւալթօնից, 40 թիւրքմօնից-րից, երկու հարիւրեակ կօզակներից եւ չորս հարիւրեակ պահապաններից, որոնք գտնվում են գնեկար-լէյտինանտ Սուբօթօնի հրամանա-տարութեան տակ: Սեպտեմբերի 15-ին սկսվեց մեր զօրքերի առաջխաղութիւնը հին Երկուսնի անամբ եւ սեպտեմբերի 18-ին մեր զօրքերը գրաւեցին Մուկիլէնը կարճատեւ եւ անկարգ դի-մադրութիւնից յետոյ, որ ցոյց տուին Մուկիլէնի չինական զօրքի մնացորդները, որոնք յաղթված ու ջարդված էին սեպտեմբերի 14-ին Շախ

կայարանի մօտ: Երբ ուսաները մտան քաղաք, նա արդէն կողպուած եւ այրված էր չինա-կան զինուորներից: Հրդեհը աղողվեց հանգչեղ եւ կարգը վերականգնել: Բնակիչների մի մասը մնացել է քաղաքում: Վերցված են բազմաթիւ հորագոյն թնդանթներ եւ մեծ քանակութեամբ ռազմամթերք: Զօրքերի առողջութիւնը եւ տրամադրութիւնը անգրաւանց են:

ՆՕՎՕՁԵՐԿԱՍԿ: Շոք եղանակը եւ երաշտը հնարաւորութիւն չեն տալիս աշնանացանն սկսելու: Արօտները բոլորովին խանձված ու այրված են:

ԲԵՎԵԼ: «Зарница» զբոսանաւը, որի վրա գտնվում են Նորին Բարձրութիւն Թաղաժա-ռանգը եւ յունական արքայադիր Նիկոլայ, ճա-նապարհ ընկաւ դէպի Դանիա:

ՏԵՄԵՐԵ: Օտարապի փախտականները Պատիւնֆուտ հրաժարվում են հետեալ քաղա-քից, որովհետեւ վախենում են դաւաճանու-թիւնից չինական պահապան զինուորների կող-մից: Գերմանական զօրաբաժինը, բաղկացած 500 մարդուց եւ երկու թնդանթներից, որ ու-ղարկված էր հետախուզելու ծինայինիւնի ուղղութեամբ գտնվող տեղերը եւ սայլեր ու շրջներ հաւաքելու դէպի Պատիւնֆուտ արչա-ւելու համար, վերադարձաւ չորս օր բացակա-վելուց յետոյ: Նա անցաւ ծինայինիւնից 7 մը-դոն այն կողմը եւ տեսաւ այնտեղ շատ «բուռնցականներին»: Բանակից հեռացած եր-կու մարդիկ ծանր կերպով վերաւորվեցին. ետպօնական մի կուրի կտոր կտոր է արված: Արչաւանը Պատիւնֆուտ վրա տեղի կունե-նայ, երեւի, ծինայինիւնի վրայով: Արչաւա-նը յետաձգված է եւ ճանապարհ կրկնի, երե-ւի, երկուստարթի կամ երեքարթի: Չինական աղբիւրից հաղորդում են, որ զինուորները եւ աղբաւորութիւնը փախան Պատիւնֆուտից եւ «Մեծ բուռնցի» կաղաթիւ խմբի դրակցին քաղաքը ու դէպի Պատիւնֆուտ տանող ճանա-պարհը. սպանում են, որ նրանք էլ կը փախ-չեն, հէնց որ կը լսեն զօրքերի մօտենալու մասին:

ԼԵՅԵՆԲՈՒՐԳ: Վերջին հինգ օրերը գնե-րալ Բուլլեր անդադար առաջ էր գնում Մակ-մանի բլուրների եւ Պիլլիքիմի մօտի եւ կրե-գէրպօտի հովտի վրայով, ամեն տեղից քշե-լով թշնամուն: Նա այժմ գտնվում է Օբրիգս-տադրի մօտ:

ՇԱՆԳՀԱՅ: Հաւաստի աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, բրիտանական «Վօրլդ» մարտանաւը այսօր ուղեւորվեց դէպի Ուանկու: Ուանկու վրա հակելու հա-մար, այդ յանձնարարութիւնը կապում են կայ-սերական պալատը գերելու հնարաւորութեան սպասելիքի հետ: Բրիտանական «Վօրլդ» գետային շոգենաւը գալիս է այստեղ տեսնելու ծինային մարտկոցների մօտեցողներին եւ նրանց վրա հակելու համար:

ՀՕՆԳԿՕՆԳ: Երեկ մօտ 1000 ապստամբներ յարձակում գործեցին Սէյվան գիւղի վրա, ուր տեղի է ունենում տօնավաճառ եւ որ գտնվում է ութ մղոն դէպի հիւսիս-արեւելք Սաւաւանից, բրիտանական հողի վրա. նրանք յետ մղվեցին Կայսերական կանոնաւոր զօրքից մի հարիւրեակ, լուրերին Նայկու, զուտ է դէպի Սաւաւան: Այսօր սպասում են յարձակ-ման այդ կէտի վրա: Ուստի կանոնութիւնը սահ-մանի վրա ուժեղացրած է եւ սպառազինած Մաքսիմի հրացաններով, բացի դրանից պատ-րաստած են զօրքեր Նիւթադուում են, թէ խոտ-վարարները, որոնց մասին յիշատակում է, պատկանում են չինական գաղտնի ընկերու-թիւններին: Սաւաւանից ստացված տեղեկու-թիւններով այնտեղ դեռ եւս խաղաղութիւն է տիրում, թէպէտ եւ բոլոր խանութները փակ են:

ՇԱՆԳՀԱՅ: Հնարաւոր են համարում, որ չինացիները յարձակում կը գործեն Շանգհայի վրա: 8000 չինական զինուորներ հիւսիսից մեծ ջրանցքով գալիս են դէպի հարաւ. այնտեղ գտնված զօրքերի հետ միանալու համար: Գե-ներալ Գեյլի վերադարձաւ Պեկին: Անգլիական բոլոր զօրքերին հրամայված է ձմեռանը պատ-րաստութիւններ տեսնել, բացի Վէյ-Ուայ-Վէյի գնդից, որ վերադառնում է Վէյ-Ուայ-Վէյի Թուսայ զօրքերի զլխաւոր մասը ճանա-պարհ ընկաւ. դէպի ծովափը: Շատ նաւեր, բռնաւորված պաշարեղէնով ետպօնացիների համար, բարձրանում են գետով դէպի վեր, որից եղբայրացում են, թէ ետպօնացիները պատրաստվում են ձմեռը Պեկինում անցկացնե-լու: Երկաթուղու գծի երկարութեամբ կանգ-նած են նոյնպէս ետպօնական ծովային հետե-ւականի զօրաբաժիններ: Ֆրանսիական զօր-քերի մի մասը հեռանում է Պեկինից:

